

➡➡➡ Ա ն ա պ ա տ ր ◀◀◀

երբ Գետեվին որ Գորբեյն դէպ Ասորիք կ'ուղեւորի ,
 Արմաւենւոյն բունին զամբիկն իր նիհարուկ կը կապէ
 եւ փոշոտ բստուերին տակ ուր կը չորնայ պտուղը մեռած՝
 Վերարկուին մէջ իր կոշտ կը փաթթըւի ու կը քնանայ ,
 Կը տեսնէ՞ արդեօք , դադար տալով հրակէզ խոնջէնքներուն ,
 Ովասիսն հեռաւոր ուբստեղ Թուզերն կը հասուննան ,
 եւ անծուկ հովիտն ուր ի՞ր ջուկը վըրան է զարկած ,
 եւ այն ալբի՛ւրը հոսուն որմէ խըմած են իր շրթներն ,
 եւ ոչխարները մայրոյ , եւ մըսուրին մէջ եզներն ,
 Ու կիններն որ մօտը զով ջրհորներուն կը խօսակցին ,
 Կամ աւագին վրայ շուրջբոլոր ուղտապանները նըստած
 մը հեքեաթներ մըտիկ կ'ընեն նըշոյններուն տակ լուսնին :
 Ո՛չ . անդրազոյն քան ընթացքը խուսափուկ ժամերուն ,
 Իր հոգին կը ճամբորդէ աշխարհին մէջ ցընորքներու ,
 Կ'երագէ որ Ալպորաք , հրաշապատում երիվարն ,
 Վըրընջածայն կը տանի զի՛նքը բարձունքներն երկընքին .
 Կը սարսըռայ , ու կը կարծէ տեսնել բոցոտ գոշերին մէջ՝
 ձեննեթին աղջիկներն իր քովն ի վեր հեշտանըւող :
 Մազերնէն՝ աւելի սեւ քան աղջամուղջը դըժոխքին՝
 Կը բարձրանայ հոտ մը կըծու որ իր մարմինը կ'այրէ .
 Կ'աղաղակէ , կ'ուզէ բռնել եւ իր կուրծքին վրայ սեղմել
 Այդ տեսիլքն աստուածային՝ իր Թեւերուն մէջ կարկառուն :
 Բայց հեռուն , աւագկոյտին վրայ շընագայնն ահա ոռնաց .
 Կը դափրէ իր զամբիկն , եւ ա՛լ երա՛զը կը ցընդի .
 Զը կայ այլ ե՛ւրս ձեննեթ . բո՛ց ու լուռութիւն ամենուրեք ,
 Ու պղընծափայլ երկինքը մեծ՝ տարածութեան վրայ անսահման :

Թարգմ. Ա. Զ.

ԼԸՔՈՆԹ ՏԸ ԼԻԼ

